ՀՏԴ 37.02 Մանկավարժություն

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ՈՐՊԵՍ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Մարինե ՂԱԼԱՅԱՆՑ

Բանալի բառեր՝ *մշակույթ, հետազոտական, հոգեբանական, մանկավարժական, ազդեցություն, դպրոց, երեխա, պատմություն, նշանակում, զգացմունքային, լուսավորություն, վերապատրաստում, դաստիարակություն, գործընթաց, մտածողություն, երեւակայություն:*

Ключевые слова: *творчество, умение, развитие, художественный, знание, способность, сказка, интеллектуальный, моральный, культурный, исследование, психологический, педагогический, воздействие, школьный, ребенок, рассказ, средство, эмоциональный, иллюстрация, обучение, воспитание, детский, оценить, процесс, мышление, воображение.*

Key words: *creation, ability, development, artistic, knowledge, capability, fairy tale, intellectual, moral, cultural, research, psychological, pedagogical, impact, school, child, story, means, emotional, illustration, education, upbringing, puerile, to value, process, thinking, imagination.*

ЖИВОПИСНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ КАК СПОСОБ РАЗВИТИЯ ТВОРЧЕСКИХ СПОСОБНОСТЕЙ

М.ГАЛАЯНЦ

В статье рассматривается решение необходимых и важных для сегодняшних школьников задач, которые призваны формировать творческие способности и умения обучающихся путем интегрированного обучения изоискусства и литературы.

PAINTING ACTIVITY AS A WAY FOR DEVELOPING CREATIVE SKILLS

M.GHALAYANTS

The article the solution of necessary and urgent issues of today's learners that are intended to form creative abilities of school children through integrated teaching of art and literature (in our case-through making fairy tales).

Հոդվածում վեր է հանված այսօրվա սովորողներին շատ անհրաժեշտ ու հրատապ խնդիրների լուծում, որոնք կոչված են ձևավորելու դպրոցականի ստեղծագործական կարողությունները կերպարվեստի և գրականության (մեր դեպքում հեքիաթների ձևավորման) ինտեգրված ուսուցման միջոցով:

Ղ. Աղայանը հայ ժողովրդի հեքիաթներն անվանել է որպես ազգային մանկավարժության առաջին հիասքանչ թե ինչ հեքիաթներով են զարգացել Շեքսպիրի, Սերվանտեսի, Գյոթեի, Շիլլերի և այլ մեծերի երևակայությունը, ապա ես հենց այդ հեքիաթները կերաշխավորեի իմ սիրելի երեխաներին,,: (1,213):

Հիանալով հեքիաթներով՝ որպես ազգային մանկավարժության հուշարձաններ, նա գրում է, որ ոչ ոք ի վիճակի չէ մրցակցել մանկավարժության հանճար ազգի հետ: Նույնը կարելի է ասել այլ ազգերի հեքիաթների մասին:

Հեքիաթները, համարվելով գրական-գեղարվեստական ստեղծագործություններ, հասարակության համար, միևնույն ժամանակ եղել են գիտելիքների տարբեր ճյուղերի տեսական ընդհանրացումների ոլորտ: Հեքիաթները դրանք ազգային մանկավարժության

գանձարանն են, ավելին, շատ հեքիաթներ իրենց շարադրանքով մանկավարժական են, այսինքն՝ նրանցում բովանդակվում են մանկավարժական գաղափարներ:

Ընդհանրապես մանկավարժության բարձրագույն աստիճանը համարվում է մտավոր և բարոյաէթիկական զարգացման համադրումը: Մանկավարժագետների համոզմամբ այս խնդիրը կարող է արդյունավետ լուծվել այն դեպքերում, եթե դաստիարակության գործընթացում լայնորեն կիրառվեն ժողովրդական հեքիաթների նյութերը: Հեքիաթների շնորհիվ մանկական հոգում տրամաբանական մտքին զուգահեռ զարգանում է հիասքանչ գրական կերպար, ներդաշնակորեն է ընթանում գիտակցության ու նրա ամենաբնորոշ առանձնահատկության՝ զգացմունքի զարգացումը, ինչպես նաև երևակայության ու պատկերագրման կարողությունների ձևավորումը:

Հետազոտողներից շատերը մանրամասնոր մշակել են հեքիաթի մանկավարժական նշանակության և երեխայի վրա նրա հոգեբանական ներգործության հարցը: Նրանք ընդհանրապես բավականին բարձր էին արժեվորում հեքիաթը, քան պատմվածքները, ասույթները կամ առակները, որոնք ընդգրկվում են ուսումնական գրականության մեջ, հատուկ երեխաների համար, քանզի վերջիններս, ինչպես կարծում էին նրանք, այնուամենայնիվ կեղծված են:

Բացահայտելով հեքիաթի՝ որպես մանկավարժական միջոցի նշանակությունը, պետք է ընդունենք, որ եթե երեխաներին թեկուզ հազար անգամ կրկնենք միևնույն բարոյախոսականը, միևնույն է այն երեխաների համար կմնա լոկ ինչ-որ բառակույտ: Սակայն, եթե նրանց պատմենք միևնույն միտքն ունեցող մի քանի հեքիաթ, ապա երեխան կոգևորվի ու կհրճվի այդ հեքիաթներով:

Այդ հրճվանքը և հեքիաթի նկատմամբ հետաքրքրությունն ավելի մեծ կլինի, եթե փորձենք երեխայի առաջարկել ձևավորել այդ հեքիաթի մի քանի դրվագներ:

Մեծ է հեքիաթների տեսողական պատկերման կրթական դերը: Համոզված ենք, որ իրավացի չեն այն հետազոտողները, որոնք գտնում են, որ հեքիաթների պատկերագրման առանձնահատկությունն ընկած է հուզական և գեղագիտական հարթությունում, բայց ոչ ճանաչողական հարթության: Չենք կարող համաձայնել այս դրույթի հետ, քանի որ ճանաչողությունը հուզազգացմունքայինին հակադրելը, արդեն իսկ ինքնին սխալ է:

Ճանաչողությունն ու հուզական ոլորտն անբաժանելի են, քանի որ հայտնի է, որ առանց հույզերի ճշմարտության բացահայտումն անհնարին է: Ուստի այստեղ մեծ դերակատարություն ունի նաև երեխայի արդյունարար, գեղարվեստական գործունեությունը՝ նկարելը, ապլիկացիան, կառուցողական բնույթի ակտիվությունը: Մանկավարժ-նկարիչները մեծ կարևորություն են տալիս երեխաների նկարչական ակտիվությանը:

Երեխայի համար հեքիաթը և նրա պատկերագրումը, ոչ այլ ինչ է, քան կյանքը ընկալելու, կյանքի որոշակի երևույթները, հասարակության բարոյական նորմերը հասկանալու միջոց:

Իրինա Տոմկակովան, օրինակ, գտնում է, որ. ,,Ոչ մի խրատ, ոչ մի քարոզ և ոչ մի հորդոր օգուտ չի բերի, քանի որ երեխան իր հոգեբանությամբ ամենից առաջ հուզառատ է,, , որը և համապատասխանում է հենց հեքիաթի նկարազարդման բնույթին:

Նկարազարդելով հեքիաթը երեխան ցուցաբերում է առանձնահատուկ ներքին ակտիվություն՝ կարծես դառնալով նկարագրվող և ընկալվող իրադարձությունների անմիջական մասնակից: Հեքիաթիընկալումը (նաև պատկերագրում-վերարտադրումը) համարվում է կրթական զարգացվածության յուրահատուկ միջոց, որը երեխային հանում է անմիջական

ընկալման սահմաններից՝ խորասուզելով ու կողմնորոշելով նրան մարդկային վարքի մոդելների լայն սպեկտրի մեջ՝ ապահովելով հարուստ իմացական միջավայր՝ գրականություն, լեզու, կերպարվեստ:

Հեքիաթը՝ նրա պատկերագրումը համարվում է անհատի ձևավորման գեղարվեստական ու մանկավարժական կարևորագույն միջոցներից մեկը: Ինչպես արդարացիորեն նշում է Յու.Ա.Լեբեդևան. ,,Յուրաքանչյուր հեքիաթ ունի սոցիալ-մանկավարժական արդյունավետ կողմնորոշում, այն ուսուցանում է, դաստիարակում, նախազգուշացնում, խթանում գործունեությունը և նույնիսկ այն բուժում է,,: (2,115):

Ե.Ա.Ֆլերինան նշում է նաև այնպիսի մի առանձնահատկություն, ինչպիսին մանկական ընկալման պարզունակությունն է: Սովորողները իրենց պատկերագրումներում երբեք չեն կրկնում հեքիաթի թախծոտ ու տխուր ավարտը, նրանք հերոսներին միշտ պատկերացնում են հաջողակ, քանի որ երեխան իրեն պատկերացնում է այդ հերոսի փոխարեն և մտովի պայքարում է վերջինիս թշնամիների դեմ:

Հեքիաթի նկարագարդման շնորհիվ վաղ հասակից երեխաները սովորում են ճիշտ ընկալել երևույթների, արարքների բովանդակությունը, հասկանում կյանքի և իրենց պատկերացումների անհամապատասխանությունների թերի կողմերը: Յուրաքանչյուր պատկերագրման մեջ (հեքիաթի նկարագարդման) կա բարոյագիտական խրատ, որն անհրաժեշտ է երեխային, որպեսզի վերջինս յուրացնի հասարակության մեջ գոյություն ունեցող վարքի բարոյա-էթնիկական կանոնները: Ահա թէ ինչու յուրաքանչյուր մանկավարժ (ոչ միայն նկարիչ-մանկավարժը), պետք է բարձր գնահատի հեքիաթի ուսուցանող ու դաստիարակող դերը դպրոցականների զարգացման գործընթացում և այն անպայմանորեն ներառի իր մանկավարժական գործունեության մեջ:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դպրոցականների կողմից հեքիաթների պատկերագրումն ունենում է շատ մեծ հաջողություն այն դեպքերում, երբ հեքիաթի, որպես ժողովրդական բանահյուսության կատարյալ ստեղծագործության բովանդակությունը համապատասխանում է մանկական հոգեբանությանն ու կյանքի մասին նրա պատկերացումներին:

Ըստ Կ.Դ.Ուշինսկու. ,,Ժողովրդական հեքիաթում, պոեզիայով լի երեխան մանուկներին բացատրում է իր մանկական անուրջների մասին և վերջ ի վերջո ինքն էլ հավատում է այդ անուրջներին,,: (5,168):

Դպրոցական հասակի երեխաները դեռևս ունկնդիր են և նրանց մոտ գեղարվեստական ունակությունները ձևավորվում են ուսումնադաստիարակչական գործընթացում, մանկավարժի կամ մեծահասակի ակտիվ ներգործության շնորհիվ, որը
գնալով հասնում է ավելի բարձր մակարդակների, զարգացնելով ու կատարելագործելով մանկական մտածողությունը, երևակայությունն ու աշխարհի գեղարվեստական ընկալունակությունը: Այս է պատճառը, որ մանկավարժությունը երեխայի գեղագիտական դաստիարակությունը դիտարկում է գեղարվեստական գրականության, կերպարվեստի, երաժշտության և ժողովրդական բանահյուսության միջոցներով, ինչն էլ անխախտ կապի մեջ է գտնվում ձևավորվող անձի բարոյագեղագիտական զարգացման հետ:

Դպրոցական հասակում տեղի է ունենում երեխայի կողմից գեղարվեստական գրականությաան և պատկերագրման ունակությունների ձևավորում, և հենց հեքիաթն է երեխային նախապատրաստում դրան: Եվ որպեսզի երեխան ճիշտ հասկանա գեղարվեստական

ստեղծագործությունը, պետք է այդ ստեղծագործությանը վերաբերվի այնպես, ինչպես կվերաբերվեր իրական առարկաներին ու երևույթներին: Հեքիաթի հերոսների մեծամասնությունը ընկնում է ամենատարբեր վիճակների մեջ, սակայն այդ ամենը անհրաժեշտ է լինում ցույց տալու համար նրանց իրական, բնորոշ հատկանիշները:

Կարելի է ասել, որ հեքիաթի նկարազարդումը երեխայի անհատականության զարգացման, գեղագիտական ու բարոյական դաստիարակության կարևորագույն միջոցներից է: Այն ազդում է բարոյական գնահատականի և գիտակցության, վարքի չափորոշիչների, գեղագիտական ընկալման և ստեղծագործական երևակայության ձևավորման վրա:

Չափազանց մեծ է հեքիաթի նկարազարդման ուսուցողական, ճանաչողական, գեղագիտական ու դաստիարակչական նշանակությունն ու դերը, քանի որ ընդլայնելով արտաքին աշխարհի մասին երեխայի տեսական (գրական) և գործնական (պատկերագրման) գիտելիքները, ձևավորվում են երեխայի անձնային որակները, նրա անհատականությունը, ինքնագիտակցությունը, զարգանում է խոսքն ու ձևի զգացողությունը: Չէ որ, ժողովրդական բանահյուսության գոհարի՝ հեքիաթի միջոցով երեխան շփվում է բազմամիլիոն հեղինակի՝ ժողովրդի հետ, ընկալում նրա մտքերն ու զգացմունքները:

Գնահատելի է երեխաների համար գրականության և կերպարվեստի կապը, որը պետք է կողմնորոշի երեխայի ուշադրությունը, վերլուծական կարողությունը, մտածողական գործառույթները, ստեղծագործական ունակությունները, արթնացնի ու լայնացնի հետաքրքրությունների շրջանակը, օգնի ձևավորելու սեփական ,,Ես,,-ի գիտակցումը, ճանաչի իր հավակնությունների մակարդակը, կարողանա կառավարի սեփական ցանկություններն ու էմոցիաները և վերջապես կարողանա պատկերագրել այս ամենը:

Պատահական չէ, որ այն երեխաները, որոնք դաստիարակվում են հեքիաթների հզոր ներգործուն ուժով, ունենում են գեղարվեստական ավելի վառ պատկերացումներ, հարուստ բառապաշար, ստեղծագործելու ու պատկերագրելու ավելի մեծ կարողություններ ու հետաքրքրություններ:

Այսպիսով, հեքիաթների նկարազարդման միջոցով իրականացվող ուսուցումն ու դաստիարակությունը իրենից ներկայացնում է մանկավարժական բարդ գործընթաց, որում ուսումնադաստիարակչական տարբեր և միմյանց միջև համաստորադասված խնդիրներն ու միջոցները տանում են մեկ միասնական նպատակի՝ դպրոցականների համակողմանի զարգացման և նրանց հոգեկան աշխարհի հարստացմանը: Ուրեմն,

- Երեխայի գեղարվեստական մտածողության, ստեղծագործական երևակայության զարգացման մեծ հնարավորություններ ունեն ժողովրդական հեքիաթների թեմաներով տրվող առաջադրանքները:

-Օգնում են, որ երեխան հեքիաթն ընթերցելուց կամ լսելուց հետո կարողանա վերլուծել և նկարազարդել այն:

- Հեքիաթի ձևաբանական գործառույթը դա կարողությունն է գեղարվեստական լեզվի, կերպարվեստի, մշակույթի, տիրապետումն է ժողովրդական խոսքի բազմիմաստությանը, նրա գեղարվեստական պատկերավոր հարստությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Ղ. – Երկերի ժողովածու 4 հատորով, հ.3, Երևան, 1963, 548 էջ
2. Лебедеба Ю. А. – Проблема одаренности. Вопросы психологии. 2000, н.1, с.115
3. Гроицкий Ю. В. – Школа к возрождение национального самосознания. Воспитание школьников. 1997, н. 3, с. 16-24
4. Ушинский К. Д. – Педогогические сочинения. В 6-и том., М, 1990
5. Флерина Е. А. – Роль материальной среды в розвитии художественно-творческой активности школьника. М. 1981, 211с.
6. Пиаже – Психология, междисциплинарные связи и система наук. М., 1966,40с.
7. Родари Дж. – Грамматика фантазии. /перевод с итальян./, М., Прогресс, 1978, 212с.

Տեղեկություններ հեղինակի մասին.
Մ.Ա.ՂԱԼԱՅԱՆՑ , Արցախի Պետական համալսարանի հայցորդ

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, մ.գ.դ., Գ.Հ.Հարությունյանը: